«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 Ապրիլի 2023, N 6 - 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻՆ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N 13 - 12 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կայքում հրապարակվող նյութերի եռալեզու հրատարակման, «ASUE Messenger» գիտական հանդեսի 3 անգլերեն համարի, «Տնտեսություն և հասարակություն» գիտական հանդեսի, «Ամբերդ տեղեկագրի» և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հրապարակումների եռալեզու հրատարակման նպատակով անգլերեն և ռուսերեն նյութերի մշակման և խմբագրական աշխատանքների ծավալի մեծացմամբ պայմանավորված լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի հուլիսի 1-ի N 13 - 12 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Լեզուների ամբիոնին տրամադրել 1000 ժամ՝ անգլերեն նյութերի և 480 ժամ՝ ռուսերեն նյութերի հրատարակման և խմբագրման աշխատանքների իրականացման համար:

2. Տրամադրված 1000 ժամը ներառել անգլերենի ոչ լսարանային ժամերի, իսկ 480 ժամը՝ ռուսերենի ոչ լսարանային ժամերի բեռնվածության մեջ:

3. Ուսումնական բաժնին՝ UMS հարթակում կատարել համապատասխան փոփոխությունները:

4. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի հուլիսի 1-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հրատարակչական կարիքների համար լեզուների ամբիոնին արտաժամյա բեռնվածություն սահմանելու մասին» N 13 - 12 որոշումը:

5. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան